ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 05 >> հոկտեմբերի 2012թ. N 71 - Ա

ք. Արմավիր

ԱՐՍԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԵՎ ՎԱՐԱԶԴԱՏ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՋԵՐՄՈՒԿ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 3-ի N 01/16/5125-12 գրությունը.

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Արսեն Ղուկասյանին և ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վարազդատ Մկրտչյանին 2012 թվականի հոկտեմբերի 5-ից 6-ը ներառյալ գործուղել քաղաք Ջերմուկ՝ կազմակերպվող <<Գյուղական համայնքների 2-րդ համաժողովին>> մասնակցելու նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Վ.Մկրտչյան) սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարում:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ